**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**18 Ապրիլի 2024, N 9 - 1**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 5 - 4 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի N 5 - 4 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության, հայցորդության ձևակերպման կարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ամբողջ տեքստում «ՀՀ ԲՈԿ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ԲԿԳԿ» բառով և դրան համապատասխան հոլովաձևերով.

2) 11-րդ կետում «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության» բառերով.

3) 81-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ասպիրանտուրայի (հայցորդության) ավարտական տարվա ատեստավորումից առաջ անհատական պլանով նախատեսված գիտական հրապարակումների և (կամ) համապատասխան ամբիոնում ատենախոսության նախնական քննարկման արդյունքում ատենախոսության վերաբերյալ ամբիոնի դրական եզրակացության բացակայությունը.».

4) 81-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) ասպիրանտների և հայցորդների այլ պարտականությունների չկատարելը:».

3) 82-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 82.1-ին, 82.2-րդ, 82.3-րդ, 82.4-րդ, 82.5-րդ և 82.6-րդ կետերով.

«82.1. Վերականգնման ժամանակ ասպիրանտի (հայցորդի) անհատական պլանի հետազոտական և կրթական բաղադրիչներով նախկինում հավաքված կրեդիտները ճանաչվում են և նրանք ազատվում են դրանցով նախատեսված պարտավորությունների կատարումից, հետազոտական բաղադրիչի մասով նաև ատեստավորումից:

82.2. Կրթական բաղադրիչի մասով առարկայական (ծրագրային) տարբերություն է համարվում ասպիրանտի (հայցորդի) անհատական պլանում չներառված դասընթացը կամ կրթական ծրագրում և անհատական պլանում ներառված դասընթացների միջև առկա 1/3-ից ավելի բովանդակային (ծրագրային) տարբերությունը:

82.3. Ավարտական տարվա ատեստավորումը չանցնելու և ուսումնառության (հայցորդության) ժամկետը լրանալու պատճառով համալսարանից ազատված (հեռացված) ասպիրանտները (հայցորդները) վերականգնումից հետո առավելագույնը մեկ կիսամյակի ընթացքում պետք է լիարժեք կատարեն անհատական պլանով նախատեսված պարտավորությունները և հավաքեն ավարտական տարվա ատեստավորման համար անհրաժեշտ կրեդիտները:

82.4. Ավարտական տարում վերականգնվող ասպիրանտի (հայցորդի) անհատական պլանի կրթական բաղադրիչով նախատեսված դասընթացները դիտվում են որպես առարկայական (ծրագրային) տարբերություն, եթե կրթական բաղադրիչով նախատեսված կրեդիտները չեն լրացվել: Դրանք հաշվարկվում են սույն կարգի 82.2-րդ կետի դրույթներին համաձայն և ենթակա են հանձնման անհատական ժամանակացույցով:

Կրթական բաղադրիչով նախատեսված կրեդիտները լրացված լինելու դեպքում, անկախ անհատական պլանի փոփոխությունից, տարբերություններ չեն առաջանում:

82.5. Ուսումնառության (հայցորդության) ընթացիկ տարիների (բացառությամբ սույն կարգի 82.3-րդ կետով նախատեսված դեպքերի) ատեստավորումը չանցած և հեռացված ասպիրանտները (հայցորդները) վերականգնվում և ուսումնառությունը (հայցորդությունը) շարունակում են ընդհատած պահից և պետք է կատարեն անհատական պլանով նախատեսված բոլոր պարտավորություններն ու հավաքեն անհրաժեշտ կրեդիտները:

82.6. Սույն կարգի 82.3-րդ կետով նախատեսված դեպքերում չատեստավորված ասպիրանտները (հայցորդները) վերականգնվում են կրթական ծրագրով սահմանված ավարտական տարվա 2-րդ կիսամյակում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. ապրիլի 18
Երևան